ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

«ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆԸ ԿՐՈՆԱԿԱՆ ՏՈՒՐԻԶՄԻ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈՒՂԻՆԵՐԻ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ»

Հուլիսի 10-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ քննարկում «Ս. Էջմիածինը կրոնական տուրիզմի և մշակութային ուղիների խաչմերուկում» խորագրի շուրջ:

Քննարկման սկզբում բացման խոսքով հանդես եկավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վարչատնտեսական բաժնի տնօրեն Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը: Անդրադառնալով Հայաստանում կրոնական տուրիզմի զարգացման անհրաժեշտության խնդրին՝ Մուշեղ Սրբազանը կարևորեց նման սեմինարների անցկացումը՝ ընդգծելով, որ դրանք այսուհետ շարունակական բնույթ են կրելու: Սրբազանը ներկայացրեց նաև այս ուղղությամբ Մայր Աթոռի կողմից գործադրվող ջանքերը, որպեսզի իր հարկի ներքո ուխտավորները և զբոսաշրջիկները կարողանան լավագույնս հաղորդ դառնալ հայ ժողովրդի ազգային և հոգեւոր արժեքներին:

Այնուհետև ՀՀ Էկոնոմիկայի փոխնախարար Արա Պետրոսյանը շնորհակալություն հայտնեց Մայր Աթոռին՝ տուրիզմի կարևորագույն ճյուղի զարգացմանը բերվող նպաստի համար՝ նշելով, որ նման հանդիպումները նաև ավելի են ամրապնդում Մայր Աթոռի և այդ ոլորտում ներգրավված ընկերությունների համագործակցությունը:

Քննարկվող թեմայի շուրջ բանախոսություն ներկայացրեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարանների տնօրեն Տ. Ասողիկ քահանա Կարապետյանը: Տեր Հայրն իր խոսքում համառոտ անդրադարձ կատարեց Մայր Աթոռի հոգեւոր գանձերին, որոնք դարեր շարունակ դեպի իրենց են ձգել տարբեր երկրներից Հայաստան ժամանած բազմաթիվ ուխտավորների և օտարերկրացի ճանապարհորդների:

Քննարկումն ամփոփեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հրատարակչական բաժնի տնօրեն Տ. Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը: Սրբազանը քննարկումը նկատեց որպես Հայաստանում կրոնական տուրիզմի զարգացմանն ուղղված կարևոր և առաջընթաց քայլ, իր խոսքում անդրադարձավ նաև ուխտավորների համար համապատասխան պայմանների ապահովման անհրաժեշտությանը:

Վերջում տեղի ունեցավ ընդունելություն Մայր Աթոռի նորաբաց «Ազապե» ուխտավորական սեղանատանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

«ԵՂԻՑԻ ԼՈՒՅՍ» ՄՐՑԱՆԱԿԻ ՀԱՆՁՆՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հուլիսի 12-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ «Ոսկե ծիրան» միջազգային ամենամյա կինոփառատոնի առիթով Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու սահմանած «Եղիցի լույս» մրցանակի հանձնման արարողությունը: Հայոց Եկեղեցու հաստատած այս մրցանակն այս տարի շնորհվեց կինոռեժիսոր Ալեքսանդր Սոկուրովին:

Արարողության սկզբում «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի մասնակիցների և հյուրերի ներկայությունը Ս. Էջմիածնում ողջունեց Մայր Աթոռի Հրապարակչական բաժնի տնօրեն Տ. Նաթան արքեպ. Հովհաննիսյանը: Սրբազան Հայրը խոսեց հայ կինեմատոգրաֆիայի պատմության, ապա «Ոսկե ծիրան» կինոփառատոնի առաքելության մասին: Իր խոսքում Սրբազանը նաև անդրադարձավ Հայ Եկեղեցու մշտամնա հոգատարությանը հայ մշակույթի և հոգևոր-մշակութային արժեքների հանդեպ: Ներկայացնելով մեծարյալի ստեղծագործական վաստակը՝ Սրբազան Հայրը մաղթեց մեծանուն կինոռեժիսորին նորանոր ստեղծագործական հաջողություններ ու ձեռքբերումներ:

Մրցանակաբաշխության առիթով խոսքով հանդես եկան և տիար Սոկուրովին շնորհավորեցին «Եղիցի լույս» մրցանակի խորհրդի անդամ, պրոֆեսոր Դավիթ Մուրադյանը և կինոփառատոնի հիմնադիր-տնօրեն Հարություն Խաչատրյանը: Կինոարվեստը նկատելով իբրև լույսի արվեստ՝ հասցեագրված մարդկանց հոգիներին, նրանք խոսեցին նաև փառատոնի շրջանակներում Հայ Եկեղեցու սահմանած «Եղիցի լույս» մրցանակի կարևորության մասին:

Այնուհետև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր-կրթական հաստատությունների տեսուչ Տ. Գևորգ եպիսկոպոս Սարոյանը ընթերցեց հայրապետական վկայագիրը, որից հետո ներկաների ծափողջույնների ներքո Ամենայն Հայոց Հայրապետը «Եղիցի լույս» մրցանակը շնորհեց ռուս կինոռեժիսոր Ալեքսանդր Սոկուրովին՝ հոգևոր, մշակութային և մարդասիրական արժեքների քարոզչության և համաշխարհային կինոարվեստում իր նշանակալի ավանդի համար:

Մրցանակաբաշխությունից հետո ներկաների հետ իր զգացումները կիսեց պրն. Սոկուրովը: Շնորհակալություն հայտնելով Հայրապետական մրցանակի արժանանալու բարձր պատվի համար՝ հայտնի կինոռեժիսորն անդրադարձավ կինեմատոգրաֆիայի կարևոր առաքելությանը մարդկության կյանքում, արվեստի այս ճյուղի այսօրվա զարգացման ուղիներին ու արժեքներին:

Արարողությունը փակվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով և «Պահպանիչ» աղոթքով: Նորին Սրբությունը, ողջունելով կինոփառատոնի մասնակիցների ներկայությունը Մայր Աթոռում, իր գնահատանքը հայտնեց փառատոնի հիմնա-

դիր-փնօրենին և կազմակերպիչներին, ինչպեսև «Եղիցի լույս» մրցանակի շնորհման հանձնախմբին: Վեհափառ Հայրապետն իր օրհնությունն ու շնորհավորանքը բերեց նաև Ալեքսանդր Սոկուրովին՝ մաղթելով Աստծու զորակցությունը նրա ստեղծագործական կյանքին: Ամենայն Հայոց Կաթողիկոսը վստահություն հայտնեց, որ սա գեղեցիկ մի ավանդույթ կդառնա Հայոց Եկեղեցու կյանքում, երբ վաստակաշատ արվեստագետներ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ամեն տարի կարժանանան «Եղիցի լույս» մրցանակի:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՎԵՐԱՕԾՎԵՑ ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ՇՐՋԱՆԻ ԿԱՐԾԱԽ ԳՅՈՒՂԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻՆ

Սամցխե-Ջավախք նահանգի Ախալքալակի շրջանի Կարծախ գյուղի բնակչությունը, տասնամյակներ շարունակ արժանին մատուցելով իր զավակի հիշատակին, ավանդաբար հուլիսյան օրերից մեկը նվիրում է հայ մեծ աշուղ Ջիվանու երգի ու երաժշտության մեծարմանը, ոգեւորելով սերունդներին նրա արվեստի անկրկնելիությամբ: Այս անգամ եւս ավանդույթը չխախտվեց :

Այս տարի Ջիվանու (Սերոբ Ստեփանի Լեւոնյան) ավանդական մեծարման օրը բնակչության համար կրկնակի տոնական էր: Հիշատակի օրվան նախորդեց տեղի եկեղեցու վերաօծման արարողությունը՝ հուլիսի 14-ին վերաօծվեց Կարծախի Ս. Հովհաննես Կարապետ եկեղեցին:

Հնամենի, հայաբնակ Կարծախ գյուղի Ս. Հովհաննես Կարապետ եկեղեցին հիմնադրվել է 1830-ական թվականներին: Տարիներ շարունակ եկեղեցին, որպես Աստծո տուն, ծառայել է տեղի բնակչությանը: Սակայն ազգաբնակչության բազմանալուն զուգընթաց նոր եկեղեցու կառուցումը անհրաժեշտություն էր դարձել: Եւ ահա 1880-96 թթ. քանդելով նախկինում կառուցված եկեղեցին՝ նրա տեղում վեր խոյացավ բազիլիկ տիպի զանգակատնով հոյակերտ տաճարը, որի շինարարությանը իրենց մասնակցությունը բերեցին այդ ժամանակաշրջանի թիֆլիսաբնակ անվանի հայ առեւտրականները:

Եկեղեցու վերաօծման սրբազան արարողությունը սկսվեց հուլիսի 13-ի երեկոյան «Դռնբացեքի» արարողությամբ: Ձեռամբ Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի վերաօծվեցին եկեղեցու 16 սյուները, Սուրբ խորանը, մկրտության ավազանը եւ սրբապատկերները:

Հուլիսի 14-ի առավոտյան՝ Սուրբ Պատարագից առաջ, պատվարժան հյուրերը Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի, փոխառաջնորդ Բարգեն աբեղա Սալբիյանի, հոգեւոր դասի եւ ժողովրդի ուղեկցությամբ ծաղիկներ դրեցին Ջիվանու հուշարձանին, եւ կատարվեց հոգեհանգիստ:

Մեծն Ջիվանու ավանդական տոնին իրենց մասնակցությունն էին բերել ՀՀ Սփ-

յուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, նախարարության Կովկասի տարածաշրջանի պատասխանատու Տարոն Շագոյանը, Սամցխե-Ջավախքի նահանգապետ Վանո Ծիկլաուրին, Վրաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Հովհաննես Մանուկյանը, պատգամավորներ եւ պետական գործիչներ ինչպես Վրաստանից, այնպես եւ Հայաստանից, Ախալքալաքի եւ Նինոծմինդայի տեղական իշխանության մարմինների, մտավորականության եւ արվեստի ներկայացուցիչները, հյուրեր Թբիլիսիից եւ Երեւանից:

Նորաոծ եկեղեցու բակում հավաքված բազմությանը ողջույնի խոսքով դիմեցին Ախալքալաքի շրջանային ժողովի նախագահ Համլետ Մովսիսյանը, ՀՀ Սփյուռքի նախարար Հ. Հակոբյանը, «Հայլուրի» տնօրեն Գեւորգ Ալթունյանը եւ Սամցխե-Ջավախքի առաջնորդական փոխանորդ Բաբգեն աբեղա Սալբիյանը:

Հոգեշնորհ Հայր Սուրբը նաեւ առաջնորդական շնորհակալագրեր փոխանցեց եկեղեցու բարերարներին, վերանորոգող շինարարներին եւ վարպետներին:

Ջավախք նահանգն ընդհանուր առմամբ եւ Կարծախ գյուղն ի մասնավորի հայտնի են հայությանը տված իրենց անվանի զավակներով: Նրանցից է 1846 թվականին ծնված հայ աշուղական արվեստի կարկառուն դեմք աշուղ Ջիվանին, որ շարունակել և խորացրել է Նաղաշ Հովնաթանի սկսած եւ Սայաթ-Նովայի զարգացրած խորը փոլիտոփայական գաղափարներով երգի եւ խոսքի ստեղծումը:

Եկեղեցու Սուրբ Սեղանի օծմանը եւ անդրանիկ Սուրբ Պատարագի մատուցմանը հաջորդեց հրապարակախոս ու փիլիսոփա, բարոյագետ ու երգաստեղծ աշուղ Ջիվանու մեծարմանը նվիրված տոնահանդեսը, վերստին տարածվեց նրա երգն ու երաժշտությունը՝ վարպետ եւ ինքնագործ երգիչների եւ համույթների կատարմամբ: Վերստին իր հող ու ջրի վրա հառնեց աշուղ Ջիվանին. Կարծախում տարածվեցին բարձրարժեք ու խորիմաստ արվեստով նրա բառն ու բանը:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ
ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ

ԲԱՑՎԵՑ «ՆԱԳԳԱՇՅԱՆ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՏՈՒՆԸ»

Հունիսի 30-ին Երեւանի Արաբկիր համայնքի Ահարոնյան 2/2 հասցեում տեղի ունեցավ «Նագգաշյան մանուկների տուն» երեխաների աջակցության կենտրոնի բացման արարողությունը: Արարողության սկզբում ազգային և հոգևոր երգերի կատարումներով հանդես եկան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Արաբկիրի Հայորդյաց տան սաները: Ապա իրենց սրտի խոսքն ասացին «Մեր հույս» հայկական բարեգործական կազմակերպության (ԱՄՆ) նախագահ Ադրինե Կրիկորյանը և «Նագգաշյան մանուկների տուն» աջակցության կենտրոնի տնօրեն Միհրան Միրիջանյանը: Նրանց խոսքով՝ կենտրոնն իր էությամբ տարբերվելու է նմանատիպ այլ կենտրոններից՝ ունենալով հիմնականում ուսումնական ուղղվածություն:

Կարեն Դեմիրճյանը Հայաստանի Սոցիալական զարգացման նախարարությունում

Այնուհետև հանդիսապետությամբ Մուշեղ Սրբազանի կատարվեց տնօրենի արարողություն: ԱՄՆ Հայոց Արևմտյան թեմի, հայկական բարեգործական «Մեր Հույս» կազմակերպության և անհատ բարերարների աջակցությամբ «Նազգաշյան մանուկների տունը» կգործի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հովանու ներքո: Այն ծառայելու է սոցիալապես անապահով ընտանիքների 10 տարեկանից բարձր աղջիկների կրթությանը: Մանուկների տանը 50 աղջիկներ կստանան մասնագիտական կողմնորոշում ու ընկերային աջակցություն, կիմտանան արհեստների մեջ: Կենտրոնն իր դռները կբացի սեպտեմբերի 1-ից: Ապագայում նախատեսվում է նաև ապաստան տրամադրել մուրացիկ երեխաներին, որոնք օթևան ունենալուց բացի, կստանան հոգեբանական աջակցություն:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԿՐԱՎԵՐ
ՀԱՃԿԱՏԱՐԻ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅԱՆ

Սիրելի հայրենակիցներ,

1512 թ., երբ Վենետիկում, Հակոբ Մեղապարտը հրատարակում էր հայերեն առաջին տպագիր գիրքը, Եվրոպայի մեկ այլ կենտրոնում՝ Ռումինիայի Սուչավա քաղաքում, որը հայ մատենագրության մեջ հայտնի է Սեչով անվանմամբ, Տոնավաճառ տոհմանունը կրող վաճառական երկու եղբայրներ դեպի Վիեննա իրենց ճանապարհին՝ այս քաղաքի մերձակա բլուրներից մեկի վրա հրաշալի տեսիլք ունեցան՝ երկնքից երկիր իջնող հրեշտակաձայն օրհնությամբ լեցուն: Արթնանալով՝ ուխտեցին հիմնել մի վանք, որն էլ իրականացրին նույն տարում: Ուխտի կատարմամբ կառուցված այս վանքը կարճ ժամանակում դարձավ Ուխտակատար մի սրբավայր ոչ միայն ռումինահայության, այլև ռումինացիների համար՝ հռչակվելով որպես Եվրոպայի հայության «մուրազակատար» Ս. Կարապետ:

«Հաճկատար» նշանակում է հաճոյից կատար, այսինքն՝ ցանկությունները, խնդրանքները կատարող՝ խնդրակատար: Մեր ժողովուրդը Հաճկատար անունն է տվել Տիրամորը նվիրված մի շարք նշանավոր սրբավայրերի՝ ապավինելով Տիրամոր բարեխոսությանը խնդրանքների կատարման համար:

Ուխտավորների առջև առաջինը գծագրվում է բլրի վրա բարձրացող վանքի խաչը, որի համար ժողովուրդը Հաճկատարն անվանում է նաև Խաչկատար՝ խնդրանքների կատարումը խաչին ապավինելով:

Պատահական չէ և մեծ խորհուրդ ունի Հաճկատարի հենց Սուչավայում հիմնվելը: Սուչավան Եվրոպայի հայկական հնագույն հոգևոր կենտրոններից է, որն առանձին թեմ է հռչակվել դեռևս 1401 թ. Ալեքսանդր Բարի իշխանի հատուկ հրովարտակով՝ մի քանի հարյուրամյակ մնալով Արևելյան Եվրոպայի հայությանը համախմբող կարևորագույն

կենտրոններից մեկը: ԺԵ-ԺԶ. դարերում Սուչավայում կառուցվել է հայկական վեց եկեղեցի ու երկու վանք: Ողջ Եվրոպայում դժվար է գտնել մեկ այլ քաղաք, որտեղ այսքան հայկական վանք ու եկեղեցի կառուցված լինեն և այն էլ այս դարերում:

Այս զարմանահրաշ երևույթը հոգևոր մի խորին խորհուրդ ունի: Սուչավայի հայերի նախնիներն այստեղ են հասել Անի-Դրիմ-Ուկրաինա-Ռումինիա երկար ճանապարհն անցնելով և շառավիղներն են Բագրատունյաց փառքի պսակը եղող Անիի: Այս պատճառով է, որ ճանաչված պատմաբան Սուրեն Քոլանջյանն իր մեծարժեք ուսումնասիրությունը վերնագրել է «Սուչավան՝ Ռումինահայոց Անին» :

Սուչավայի հայությունը ոչ միայն Անիից սերված լինելու հիշողությունն ու գիտակցությունն է պահել, այլև եկեղեցաշինության ոգին՝ Անիի հազար ու մեկ եկեղեցիների մի մանրակերտը ստեղծելով Սուչավայի հայկական հոգևոր օջախներով:

Համայն հայությունը վերջերս տոնեց Անիի՝ Բագրատունյաց մայրաքաղաք հռչակվելու 1500-ամյակը: Սուչավայի Հաճկատարի 500-ամյակն անիական փառքի ևս մեկ ողողանջումն է, որը գալիս է հավաստելու, որ Անին շարունակվեց անիականությամբ, Անիից սերված լինելու հպարտ գիտակցությամբ:

Հաճկատարն այնքան հռչակված է եղել, որ ռումինացիներն այն կոչել են պարզապես Միտոկոյ Արմենեսկ՝ Հայոց վանք: Սուչավայի պատմության կարևոր հիշատակներից է և այն, որ աբեղայական ձեռնադրությունից հետո, մինչև հոգևորականի իր գործունեությունը սկսելը, քառասնօրյա առանձնացման շրջանը Վազգեն Վեհափառը 1943 թ. անցկացրել է այս վանքում:

Քանի որ Հաճկատարը նվիրված է Տիրամորը, գլխավոր ուխտագնացությունը թե՛ հայերի և թե՛ ռումինացիների կողմից կատարվում է Տիրամոր Վերափոխման տոնին:

Հաճկատարը ունի նաև անչափ թանկ ու նվիրական մի մասունք՝ Տաթևի վանքի զանգը, որի վրայի արձանագրության մեջ ասվում է, որ այն պատրաստվել է 1244 թ.: Այս զանգով անիական վերհուշին միախառնվում են հայոց լեռնաշխարհի վանքերի ղողանջները:

Ռումինահայ և այժմ ամերիկաբնակ Հակոբ Գույումճյանի մեծագնիվ նվիրատվության և ռումինական իշխանությունների իրականացրած աշխատանքների շնորհիվ Հաճկատարը լիովին նորոգվել է, և այս տարի Տիրամոր Վերափոխման տոնին՝ օգոստոսի 12-ին, այստեղ մատուցվելիք հայրապետական Ս. Պատարագի ելևէջներն ու Տաթևի վանքի զանգի ղողանջները ոչ միայն ազդարարելու են Հաճկատարի պատմության առաջին հինգհարյուրամյակի ավարտը, այլև երկրորդ հինգհարյուրամյակի սկիզբը:

Հաճկատարի 500-ամյակի առիթով օգոստոսի 10-12-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր հովանավորությամբ կիրականացվի ուխտագնացություն և կմատուցվի Ս. Պատարագ: Սիրով հրավիրում ենք մեր ժողովրդի զավակներին՝ մասնակցություն բերելու կատարվելիք ուխտագնացությանը և հանդիսություններին՝ կրկնելով ուխտավորների սրտից բխած և հարյուրամյակների վաղեմություն ունեցող հետևյալ խոսքերը.

Սուրբ Հաճկատար, փոքրիկ փաճար,
Ամենեցուն դու փաս մեզ ճար,
Սուրբ Հաճկատար, փոքրիկ բլուր,
Ամենեցուն խնդիրքը փուր:

ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ
ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ

ԵՐԵՒԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՇՐՋԱՆԱՒԱՐՏՆԵՐԸ ԱՂԹԱՄԱՐԻ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԲԱԿԻՆ ՄԷՋ ՍՏԱՑԱՆ ԻՐԵՆՑ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԸ

«Հետք» համացանցային թերթը կը հաղորդէ թէ 1 Յուլիսին Երեւանի Պետական Համալսարանի պատմութեան ֆաքիւլթէի պսակաւոր արուեստից եւ մագիստրոսի աւարտական դասարաններու մօտաւորապէս 100 ուսանողներ, բաժնի ղեկավար Էդիկ Մինասեանի նախաձեռնութեամբ եւ անմիջական մասնակցութեամբ եռօրեայ այցելութեամբ Թուրքիա եկան ու այցելեցին Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին, ուր բակին մէջ սպացան իրենց շրջանաւարտութեան վկայականները:

Պսակաւոր արուեստից ուսանողները յայտնեցին որ մօտաւորապէս 2500 քիլոմեթր ճամբայ անցած էին, սակայն նախնիներու հողին վրայ վկայականներ սպանալու փափաքը այնքան մեծ էր, որ յոգնութիւն չէին զգացած:

Ուսանողները Թուրքիա եկան Բավրայի սահմանակէտէն, նախ այցելեցին Վրաստանի հայկական բնակավայրերը, իսկ յետոյ մուտք գործեցին Թուրքիոյ սահմաններէն ներս: «Որեւէ օտարութիւն չզգացինք: Կարծես թէ Երեւանի, Արմաւիրի կամ Հայաստանի որեւէ այլ վայրի մէջ էինք: Զմայլուեցանք Կղարջքի լեռներուն, անտառներու դիմաց, հիացանք փարթամ մարգագետիններու վրայ, զովացանք լեռնաղբիւրէ մը ջուր խմելով: Ճամբան մեզ կը տանէր դէպի Կարս, իսկ բլուրի վրայ կերեւէր Կարսի բերդը, կուռ ու անմատչելի», կը պատմէին ուսանողները:

Անոնք դիտել տուին որ Կարսի մէջ տակաւին կը պահպանուին հայկական ոճով կառուցուած բնակելի ու վարչական շէնքեր, որոնք կը յիշեցնեն Գիւմրիի հին շինութիւններու ոճը:

Կարսի մէջ ճաշելէ ետք, ուսանողներու խումբը ճամբայ ելաւ դէպի Պէյազըթ ու այցելեցին Ըղդիրը, Արաքսի ափէն անցնելով հասան Հայկական պար լեռնաշղթայի հակառակ կողմը:

«Պէյազըթի մէջ հայկական որեւէ բան չտեսանք, պանդոկի մը մէջ գիշերելէ ետք, առաւօտուն գացինք Պէյազըթի «Տարոյնք» բերդը, որ կը գտնուէր կիսաւեր վիճակի մէջ, սակայն կը յիշեցնէր որ ատենօք անմատչելի շինութիւն մը եղած էր», կը նշէին երիտասարդ պատմաբանները:

Պէյազըթէն հայ ուսանողներու խումբը առաջնորդուեցաւ դէպի Վան, տեսան Բերկրիի ջրվէժը իր ճօճուող կամուրջով:

Աղթամար կղզի հասան նաւակներով: «Մեր այցելութեան ընթացքին Վանայ լիճը հանդարտ էր, պարզ ու զուլալ: Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ մեր աղօթքը ընելէ ետք հանդիսաւորապէս ստացանք մեր վկայականները», կ՚ըսեն անոնք, նշելով որ իրենց ընկերացող հոգեւորականը քանի մը շրջանաւարտներ մկրտած է եկեղեցւոյ կից մատրան մէջ, իսկ յետոյ միասնաբար համբուրեցան Վանայ լճի տառեխ ձուկը:

Երեկոյեան ուսանողներու խումբը այցելեց Վանի բերդը, յետոյ «Վանայ կատուի տուն», հիանալով կապոյտ-կանաչ աչք ունեցող կատուներու վրայ:

Ուխտագնացութեան վերջին օրը շրջանաւարտները անցան Հայաստանի հին մայրաքաղաքներէն Անի: «Անիի տեսարանը անմոռանալի էր: Մեր առջեւ կը յառներ հազարումէկ եկեղեցիներու քաղաքը՝ իր աւերակներով, կիսաւեր եկեղեցիներով, կիսականգուն պարիսպներով: Այցելեցինք Ս. Գրիգոր Ապուղամրենց, Անիի Մայր տաճար Ս. Կաթողիկէ, Հոնենցի Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Ս. Փրկիչ եկեղեցիները, տեսանք Անիի կամուրջը, պարսպները: Հիմա անկարելի է բառերով նկարագրել մեր ապրումները, որոնք անջնջելի տպաւորութիւն թողեցին մեր վրայ, վառ յիշողութիւններ ու կարօտի յուզում մը», կը նշեն ուսանողները:

«ՄԱՐՄԱՐԱ», 11 ՅՈՒԼԻՍ, 2012

ԵՒՍ ՀԻՆԳ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՍՊԱՍԱՎՈՐԻ ՀՀ ՋԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

Հուլիսի 13-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ Զինված ուժեր հոգևոր սպասավորության մեկնող հինգ եկեղեցականների՝ ուղեկցությամբ Հայոց բանակի հոգևոր առաջնորդ Տ. Վրթանես եպս. Աբրահամյանի:

Հանդիպմանը Վրթանես Սրբազանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց Հայոց բանակի հոգևոր նոր սպասավորներին, անդրադարձավ Բանակի հոգևոր սպասավորության գործունեությանը:

Այնուհետև հոգևոր ծառայության կոչված եկեղեցականներին օրհնեց և իր պատգամը տվեց Ամենայն Հայոց Հայրապետը: Ընդգծելով, որ նրանք կոչված են հայ զինվորի ոգին բարձրացնելու, Հայրենիքի և Եկեղեցու հանդեպ նրա սերը զորացնելու, քրիստոնեական արժեքներին հաղորդ դարձնելու կարևոր ծառայության՝ Նորին Սրբությունը հորդորեց օրինակելի անձեր դառնալ զինծառայողների համար և հավատի խորն ապրում փոխանցել նրանց: Վեհափառ Հայրապետը կոչ արեց անսակարկ ու անմվազ նվիրումով հովվական աշխատանք իրականացնել այն գիտակցությամբ, որ բանակը հայոց պետության և ժողովրդի գոյության երաշխիքն է:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն արդյունավետ ծառայություն մաղթեց եկե-

ղեցականներին՝ իրենց սպասավորությամբ նպաստելու Հայրենիքի անվտանգությանն ու ապահովությանը:

Ներկայումս ՀՀ Զինված ուժերի հոգևոր առաջնորդությունն ունի տարբեր զորամասերում սպասավորող քառասունյոթ եկեղեցական: Այս տարի լրանում է առաջնորդության 15-ամյակը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅՈՐԴՅԱՑ ՏԱՆ ՍԱՆԵՐԻՆ

Հուլիսի 13-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Նոր Նախիջևանի և Ռուսաստանի Հայոց թեմի Մոսկվայի հայորդյաց տան ստեղծագործական խմբերին՝ ուղեկցությամբ հայորդյաց տան տեսուչ Տ. Առաքել քահանա Ամիրյանի:

Հանդիպման սկզբում շնորհակալություն հայտնելով Վեհափառ Հայրապետին ընդունելության համար՝ տեսուչ Տեր Հայրը տեղեկացրեց, որ թեմական առաջնորդ Տ. Եզրաս եպս. Ներսիսյանի օրհնությամբ և մոսկվաբնակ հայ բարերար Էդգար Արամյանի հովանավորությամբ հաստատության սաներն ամեն տարի ուխտագնացության են գալիս հայրենի երկիր՝ այցելելու սրբավայրեր և հաղորդ դառնալու ազգային ու հոգևոր սրբազան արժեքներին: Տեր Հայրն իր խոսքում նշեց, որ հայորդյաց տան ստեղծագործական խմբերը՝ «Գավիթ» թատրոնը, «Հայասա» ու «Ովսաննա» պարային համույթները, «Նորահրաշ» երգչախումբը, արդեն ելույթներով հանդես են եկել Հայաստանի մի շարք հայորդյաց տներում:

Այնուհետև հայորդյաց տան սաների ներկայությունը համայն հայության նվիրական հոգևոր կենտրոնում ողջունեց Վեհափառ Հայրապետը՝ ուրախություն հայտնելով երիտասարդների ստեղծագործական ձեռքբերումների կապակցությամբ: Նորին Սրբությունն ընդգծեց, որ հայորդյաց տան սաների հաջողությունները վկայությունն են թեմական կյանքում ծավալվող հոգևոր և հայապահպան աշխույժ գործունեության: Այս առիթով Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը բերեց Նոր Նախիջևանի և Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ Եզրաս Սրբազանին՝ եկեղեցու հովանու ներքո երիտասարդներին կրթելու և հայ ազգային ավանդները նրանց մեջ միշտ ամուր պահելու ջանքերի համար:

Հանդիպման ժամանակ «Նորահրաշ» երգչախումբը հանդես եկավ ազգային և հոգևոր երգերի գեղեցիկ կատարումներով: Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերստին իր օրհնությունը բերեց հայորդյաց տան սաներին՝ մաղթելով միշտ հավատարիմ մնալ ազգային և եկեղեցական արմատներին, անաղարտ պահպանել ազգային ինքնությունն ու դիմագիծը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՎԱՏԻԿԱՆԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Հուլիսի 16-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Վատիկանի Արևելյան Եկեղեցիների Ժողովի նախագահ կարդինալ Լեոնարդո Սանդրիին՝ ուղեկցությամբ Հայաստանում և Վրաստանում պապական նվիրակ Մարեկ արքեպիսկոպոս Սոլչինսկու և Հայաստանում, Վրաստանում ու Արևելյան Եվրոպայում Հայ Կաթողիկե Եկեղեցու առաջնորդ Ռաֆայել արքեպիսկոպոս Մինասյանի:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետն ուրախությամբ ողջունեց կարդինալի այցը Հայաստան և Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ արձանագրելով, որ Հայ Առաքելական և Հռոմի Կաթոլիկ Եկեղեցիների՝ պատմականորեն նվիրագործված հարաբերություններն աչքի են ընկնում առանձնակի ջերմությամբ: Նորին Սրբությունը գոհունակությամբ ընդգծեց Մայր Աթոռի և Վատիկանի միջև կրթական և ընկերային ոլորտներում առկա արդյունավետ համագործակցության կարևորությունը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերհիշեց իր հանդիպումները Հովհաննես Պողոս Բ. երջանկահիշատակ պապի և Հռոմի Բենեդիկտոս ԺԶ. քահանայապետի հետ: Ապա անդրադառնալով նաև կարդինալ Սանդրիի հետ ունեցած հանդիպումներին՝ Նորին Սրբությունը բարձր գնահատեց վերջինիս առանձնահատուկ վերաբերմունքը հայ ժողովրդի և Հայոց Եկեղեցու հանդեպ:

Խոսելով Քույր եկեղեցիների հետ հարաբերությունների և համագործակցության մասին՝ Վեհափառ Հայրապետը մասնավորապես ընդգծեց, որ Քրիստոսի Եկեղեցին պետք է սիրո միության մեջ լինի՝ պատմական զարգացումների արդյունքում ձևավորված արժեքային համակարգերի լիարժեք, անխաթար պահպանությամբ, ինչը կնպաստի քրիստոնեական առաքելության հաջող իրագործմանը:

Հանդիպման առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարդինալ Սանդրիի միջոցով եղբայրական իր սերն ու ողջույնները փոխանցեց Հռոմի Սրբազան Քահանայապետին:

Իր հերթին, կարդինալ Սանդրին ևս ուրախություն հայտնեց հանդիպման առիթով և անդրադարձավ Հայ Եկեղեցու հետ Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու եղբայրական հարաբերություններին՝ հույս հայտնելով, որ դրանք ավելի կսերտանան ու կզորանան: Վատիկանի Արևելյան Եկեղեցիների Ժողովի նախագահն Ամենայն Հայոց Կաթողիկոսին փոխանցեց նաև Բենեդիկտոս ԺԶ. պապի ջերմ ողջույնները:

Հանդիպմանը ներկա էին նաև Մայր Աթոռի Հրապարակչական բաժնի տնօրեն Տ. Նաթան արքեպ. Հովհաննիսյանը և Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ Տ. Հովակիմ եպս. Մանուկյանը:

Հանդիպումից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը և կարդինալ Լեոնարդո Սանդրին այցելեցին Մայր Տաճար, աղոթք բարձրացրին Իջման Ս. Մեղանի առջև:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՄՆ ԱՐԵՒԵԼՅԱՆ ԵՒ ԱՐԵՒՄՏՅԱՆ ՀԱՅՈՑ ԹԵՄԵՐԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻՆ

Հուլիսի 15-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ Արևելյան և Արևմտյան Հայոց թեմերի երիտասարդ ուխտավորներին՝ ուղեկցությամբ խմբերի ղեկավարներ Տ. Հակոբ քհն. Գեւորգյանի և Տ. Ավետիս քհն. Աբովյանի:

Հանդիպման սկզբում Տեր Հայրերը Վեհափառ Հայրապետին ներկայացրին երիտասարդներին՝ տեղեկացնելով, որ թեմական առաջնորդներ Տ. Խաժակ արքեպ. Պարսամյանի և Տ. Հովնան արքեպ. Տերտերյանի օրհնությամբ խմբերն ամեն տարի այցելում են Հայրենիք ուխտագնացության, ինչպես նաև «Հայկական ծառայողական ծրագիր» և «Քրիստոնեական երիտասարդական առաքելություն դեպի Հայաստան» ծրագրերի շրջանակներում իրենց մասնագիտական ծառայությունն են բերում Հայաստանի մարզերից որևէ մեկում:

Այնուհետև երիտասարդներին ողջունեց և իր օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ուրախություն հայտնելով թեմերից երիտասարդների ամենամյա այցելությունների և Հայրենիքին իրենց սպասավորությունը բերելու պատրաստակամության համար: Իր խոսքում Նորին Սրբությունն ընդգծեց այսպիսի այցելությունների կարևորությունը՝ նշելով, որ դրանք խանդավառում ու ոգեշնչում են երիտասարդներին և հնարավորություն են ընձեռում անձնապես տեսնել և ճանաչել Հայրենիքը՝ հաղորդակից դառնալով նրա բազմադարյա հարուստ մշակույթին և սրբազան արժեքներին:

Վեհափառ Հայրապետն իր մասնավոր գնահատանքը հայտնեց թեմական առաջնորդներին՝ նման այցելություններ կազմակերպելու և Սփյուռքի երիտասարդ հայորդիներին Հայրենիքը և իրենց ինքնությունը բացահայտելու հնարավորություն ընձեռելու համար: Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ այս ացելության արդյունքում երիտասարդները հոգեպես և գիտելիքներով հարստացած ու առավել խանդավառված պիտի վերադառնան իրենց բնակավայրեր:

Հանդիպումից հետո երիտասարդները Մայր Տաճարում մասնակցեցին Ս. և Անմահ Պատարագին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԳԵՒՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՄԱՎԵՐՋՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հուլիսի 18-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի (Աստվածաբանական համալսարան) ամավերջյան հանդիսությունը:

Հանդիսությունը սկսվեց Տերունական աղոթքով, որին հաջորդեցին ՀՀ և Գեւորգ-

յան հոգևոր ճեմարանի օրհներգերը: Այնուհետև ներկաները մեկ բոպե լռությամբ և աղոթքով հարգեցին հիշատակը ճեմարանի դասախոս նորոգ հանգուցյալ Վարագ Ներսիսյանի:

Ապա Գևորգյան հոգևոր ճեմարանի 2011-2012 ուսումնական տարվա ամփոփիչ հաշվետվությունը ներկայացրեց Մայր Աթոռի կրթական հաստատությունների վերատեսուչ Տ. Գևորգ եպս. Սարոյանը: «Գևորգյան հոգևոր ճեմարանի պատմությանը գումարվեց ևս մեկ տարի: Մեկ տարի, որը մեզ համար անցավ ակնթարթի նման՝ ուսումնական հարատև աշխատանքի, կրթական ու դաստիարակչական բնականոն հոգսերի բովում: Գուցե շատերին թվա, թե այս ուսումնական տարին ևս ոչնչով չէր տարբերվում անցածներից, բայց ո՛չ մեզ համար, քանզի մշտապես մեր մեջ այն գիտակցությունն է խոսել, որ ճեմարանի ուսումնական ամեն մի օրը, ամիսը, տարին մեծ կարևորություն ունի Մայր Եկեղեցու ապագայի կերտման համար: Մշտապես մեր աշխատանքում ձգտել ենք պատրաստել առօրյա պայմանական մտածողությունից զերծ և նվիրյալ հոգևորականներ, որոնք կամք կդրսևորեն մեր՝ ներկաներիս թերությունները սրբագրելու և ավելի արդյունավետ ծառայություն մատուցելու Մայր Եկեղեցուն», -նշեց Սրբազանն իր խոսքում: Գևորգ Սրբազանը տեղեկացրեց, որ ճեմարանում դասավանդում է 53 դասախոս, որոնցից 34-ն աշխարհական է, իսկ 19-ը՝ հոգևորական: Ուսանողների թիվը 118 է, որոնցից 21 շրջանավարտ սարկավագ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ արդեն իսկ համալրել են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության շարքերը և ծառայության կոչվել տարբեր հոգևոր կառույցներում: Սրբազան Հայրը ներկայացրեց նաև բարձրագույն կրթությամբ անձանց համար կազմակերպվող Քահանայից պատրաստման երկու լսարանի 26 սանի առաջադիմությունը՝ տեղեկացնելով, որ այս տարի ևս տեղի կունենա նոր ընդունելություն:

Իր խոսքում Սրբազան Հայրը շնորհակալություն հայտնեց դասախոսներին կատարված աշխատանքի համար: Վերատեսուչը նաև իր գնահատանքը բերեց ճեմարանի սաներին՝ ուսումնառության ընթացքում նրանց ցուցաբերած պատրաստակամության, կարգապահության և ջանասիրության համար: Ամավերջյան հանդիսության ընթացքում ճեմարանականները հանդես եկան հոգևոր ու ազգային երգերի կատարումով և ասմունքով, որից հետո խոսք ասաց Զ. լսարանի սան Արսեն սրկ. Մաթևոսյանը:

Այնուհետև բարձր առաջադիմություն ցուցաբերած սաները ստացան խրախուսական նվերներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԿՐԹՕՋԱԽՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ ԾԱՂԿԱԶՈՐՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը «Վորլդ Վիժն» միջազգային քրիստոնեական բարեգործական կազմակերպության հա-

յաստանյան գրասենյակի աջակցությամբ հուլիսի 16-21-ը Ծաղկաձորի Գրողների տանն անցկացրեց կիրակնօրյա կրթօջախների ուսուցիչների վերապատրաստման դասընթաց: Ծրագրում ընդգրկված էին շուրջ 150 ուսուցիչներ հայաստանյան բոլոր թեմերից:

Դասընթացի մեկնարկին բացման խոսքով հանդես եկան Մայր Աթոռի ՔԴԿ տնօրեն Տ. Վարդան աբեղա Նավասարդյանը և «Վորլդ Վիժն»-ի հայաստանյան գրասենյակի՝ ՀՀ կառավարության և Եկեղեցու հետ կապերի պատասխանատու տիկ. Կարինե Հարությունյանը, որոնք, երկուստեք կարևորելով կառույցների արդյունավետ համագործակցությունը, հույս հայտնեցին, որ այն շարունակական և առավել ընդգրկուն կլինի:

Դասընթացի օրակարգում ընդգրկված էին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դավանաբանության, Սուրբ Գրքի և եկեղեցաբանական տարաբնույթ հարցերի վերաբերյալ դասախոսություններ, որոնք ներկայացվեցին ինչպես հոգևորականների, այնպես էլ աշխարհական մասնագետ բանախոսների կողմից: Առաջին անգամ դասընթացի շրջանակներում Արարատյան Հայրապետական և Արմավիրի թեմերի ուսուցիչները ներկայացրին օրինակելի դասեր, որոնց հետևեցին մեթոդական քննարկումներ:

Դասընթացի ավարտին ուսուցիչները Կեչառիսի վանքում մասնակցեցին ուխտի Ս. Պատարագին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՄԱՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ԵՒ ԿԱՆԱԴԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԵՐԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻՆ

Հուլիսի 22-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Արգենտինայի Հայ բարեգործական ընդհանուր միության «Մարի Մանուկյան» վարժարանի ավարտական դասարանի սաներին՝ ուղեկցությամբ Տ. Մաղաքիա աբեղա Ամիրյանի, ինչպես նաև Կանադայի Հայոց թեմի Տորոնտոյի ՀԲԸՄ սկաուտների խմբին և Ս. Երրորդություն եկեղեցու «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շաբաթօրյա դպրոցի աշակերտներին՝ ուղեկցությամբ Տ. Գեղարդ քհն. Կարապետյանի:

Հանդիպման սկզբում հոգևոր հայրերը նախ Վեհափառ Հայրապետին ներկայացրին ուխտավորներին, ապա տեղեկացրին, որ երիտասարդներն՝ իբրև Հայրենիքի և Հայոց Եկեղեցու նվիրյալ զավակներ, թեմական առաջնորդների օրհնությամբ ամեն տարի ուխտագնացության են գալիս Հայաստան և Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ իրենց ուխտը վերանորոգելու և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնություններն ու պատգամները ստանալու համար:

Այնուհետև երիտասարդ հայորդիներին իր օրհնությունը փոխանցեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Ուրախություն հայտնելով գեղեցիկ ավանդույթ դարձած այս ուխ-

փագնացությունների կապակցությամբ՝ Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ երիտասարդները ոգեվոհության ու ոգեշնչման շրջան պիտի ապրեն Հայաստանում, քանի որ այս այցելություններն իրենց զորավոր կնիքը պիտի դնեն նրանց հոգիների վրա՝ հնարավորություն ընձեռելով հաղորդ դառնալ հայրենի երկրի հարուստ մշակույթին և սրբազան արժեքներին, անձնապես տեսնել, ապրել ու զգալ այն ամենը, ինչ սովորել են իրենց դպրոցներում: Անդրադառնալով հայ ժողովրդի գեղեցիկ և լուսավոր ապագայի կերտման գործում երիտասարդ սերնդի ներկայացուցիչների կարևոր առաքելությանը՝ Վեհափառ Հայրապետն իր խոսքում կարևորեց Սփյուռքի և Հայաստանի երիտասարդների միջև ամուր կապն ու համագործակցությունը: Նորին Սրբությունը նշեց նաև, որ յուրաքանչյուր սփյուռքահայ երիտասարդ պետք է սերտորեն կապված լինի Հայաստանին, քանի որ Հայրենիքն է համայն հայության գոյության և լինելության հիմքն ու երաշխիքը:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց երիտասարդներին՝ մաղթելով, որ Տիրոջ ամենակարող Աջը հովանի լինի նրանց իրենց հետագա կյանքի և գործունեության ընթացքում:

Նույն օրը երիտասարդները Մայր Տաճարում ներկա գտնվեցին Պատարագի սրբազան արարողությանը, այցելեցին Մայր Աթոռի թանգարաններ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԿԱԹՈՂԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Հուլիսի 24-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ Տ. Հովակիմ եպս. Մանուկյանն ընդունեց Գերմանիայի Կաթոլիկ Եկեղեցու մի խումբ ուխտավորների՝ առաջնորդությամբ Գերմանիայի Կաթոլիկ եպիսկոպոսների կոնֆերանսի խոսնակ Մատթիաս Քոփի:

Հանդիպման սկզբում Մատթիաս Քոփը նախ ներկայացրեց խմբի անդամներին և այցելության նպատակը, ապա տեղեկացրեց, որ ուխտավորներն ութ օրերի ընթացքում արդեն այցելել են Հայաստանի հայտնի պատմական վանքեր ու եկեղեցիներ:

Այնուհետև ուխտավորների այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին ողջունեց Հովակիմ Սրբազանը՝ իր խոսքում նշելով, որ Հայ Եկեղեցին առանձնակի սիրով է ընդունում Քույր եկեղեցիների ուխտավորներին, որոնք ցանկանում են ավելի մոտիկից ծանոթանալ հայ ժողովրդի հարուստ մշակույթին ու սրբազան ժառանգությանը և հաղորդ դառնալ քրիստոնեական հնագույն արժեքներին: Հովակիմ Սրբազանը հյուրերին նաև համառոտ ներկայացրեց Հայ Եկեղեցու պատմության կարևոր դրվագները, նվիրապետական կառուցվածքը, խորհրդային շրջանում Հայոց Եկեղեցու կրած դժվարությունները և եկեղեցի-պետություն հարաբերությունների ներկա վիճակը:

Անդրադառնալով միջեկեղեցական հարաբերություններին՝ Սրբազան Հայրը նշեց, որ Հայ Եկեղեցին ջերմ հարաբերությունների և սերտ համագործակցության մեջ է քրիստոնեական Եկեղեցիների հետ. տեղի են ունենում եկեղեցականների փոխայցելություններ, ուսանողների փոխանակումներ և բազում համատեղ կրթական և ընկերային ձեռնարկներ:

Հանդիպմանը Հովակիմ Սրբազանը պատասխանեց նաև ուխտավորների հարցերին, որոնք վերաբերում էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կողմից իրականացվող կրթական, քարոզչական և հասարակական գործունեությանը, ինչպես նաև ապագայի ծրագրերին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՄԵԿՆԵՑ ԻՏԱԼԻԱ

Հուլիսի 24-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական այցով մեկնեց Իտալիա:

Այցի ընթացքում Նորին Սրբությունը հանդիպումներ կունենա Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարերարների հետ՝ քննարկելու իրենց կողմից սպանձնած տարբեր ծրագրերի ընթացքը:

Օգոստոսի 10-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը հովվապետական այցով կմեկնի Ռումինիայի Հայոց թեմ, որտեղ կհանդիսապետի Սուչավայի Հաճկատար Ս. Աստվածածին վանքի վերաօծման արարողությունը և հիմնադրման 500-ամյակի տոնակատարությունները:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

«ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆԻ ԵՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ

Տիկ. Ժերմեն Տեմիրալը (ԱՄՆ Արևմտյան թեմ/
Տիար Ֆրունզիկ Գրիգորյանը (Կոտայքի թեմ/
Տիար Վարուժան Փամբուկչյանը (Ռումինիայի թեմ/

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԻ ԵՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ

ՀԲԸՄ Երիտասարդական մարգահատերի մասնակիցները
Օթարի Հակոբյանը և Արթուր Ջանիբեկյանը (Արագածոտնի թեմ)

Անդրանիկ Ջորայանը (ԱՄՆ Արևմտյան թեմ)
Վաչիկ Սահակյանը (Կոտայքի թեմ)
Պերճ Ոսկանյանը (Ռումինիայի թեմ)
Ինես Բուդանը (Ռումինիայի թեմ)
Ջարեհ Նազարյանը (Ռումինիայի թեմ)
Գրիգոր Պետրոս Ահարոնյանը (Ռումինիայի թեմ)
Վարդան Առաքելյանը (Ռումինիայի թեմ)
Վիտրիկա Պոպան (Ռումինիայի թեմ)
Ժիրայր Գյուլբենկյանը (Ռումինիայի թեմ)
Միհրան սրկ. Սարաֆյանը (Ռումինիայի թեմ)
Մարգար Յազեճյանը (Ռումինիայի թեմ)
Մխիթար Տոլմանյանը (Ռումինիայի թեմ)
Սիրուն Թերզյանը (Ռումինիայի թեմ)
Սիրվարդ Գիրիշճյան Քյուրտյանը (Կանադայի թեմ)
Եզնիկ քհն. Կյուզելյանը (Բրազիլիայի թեմ)

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԹԵՄԵՐՈՒՄ ԵՒ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ նոր նշանակումներ են կատարվել Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու թեմերում և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր կրթական հաստատություններում:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Տ. Հարություն աբեղա Կիրակոսյանը, ազատվելով Հառիճավանքի ընծայարանի տեսչի պարտականություններից, ստանձնել է Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցի տեսչի պարտականությունները: Հառիճավանքի ընծայարանի տեսուչ է նշանակվել Մայր Աթոռի միաբան, ընծայարանի փոխտեսուչ Տ. Նշան աբեղա Հմայակյանը:

Նոր Նախիջևանի և Ռուսաստանի Հայոց թեմից Տ. Խաչ քահանա Ղազարյանը ծառայության է կոչվել Բուլղարիայի Հայոց թեմում, իսկ նորաօծ Տ. Սեպուհ քահանա Ամիրյանն իր հոգևոր ծառայությունը կիրականացնի Նոր Նախիջևանի և Ռուսաստանի Հայոց թեմում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԿԱՐԳԱԼՈՒՅԾ Է ՀՌՉԱԿՎԵԼ Տ. ԱՐՇԵՆ ՔԱՀԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Տ. Արշեն քահանա Սարգսյանը (Շիրակի թեմ)՝ եկեղեցական ծառայությունից հրաժարվելու մասին իր դիմումի հիման վրա:

Այսուհետ կարգալույծ հոգևորականը կդասվի աշխարհականների շարքը՝ Արմեն Սարգսյան ավագանի անունով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ